2/32-3 131

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«17» 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000127

Ձեռնարկողը՝ ***«Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս» ՍՊԸ***
ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝ ***Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի վարչական տարածքում՝ Երևան-Գառնի մայրուղու թիվ 6/12 և 6/14 հողամասերում ուղղաթիռային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000127

<< 18 >> 12 2020թ.

Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի վարչական տարածքում՝ Երևան-Գառնի մայրուղու թիվ 6/12 և 6/14 հողամասերում ուղղաթիռային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայր՝ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք,

Ներածական մաս «Արմենիան Հելիքոփթերս» ՍՊ Ընկերության նախաձեռնությամբ մշակվել է ներդրումային ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է Ջրվեժ բազմաբնակավայրային համայնքում, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ին պատկանող «Ջրվեժ» անտառապարկի տարածքում կառուցել հանգստյան գոտի՝ գրասենյակային մասնաշենքով ու հյուրասենյակներով, ուղղաթիռային կայանով և եզակի ուսումնական կենտրոնով:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի և «Արմենիան Հելիքոփթերս» ՓԲԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքի թիվ 6/12 հասցեում գտնվող 0.74454հա (ծածկագիր՝ 07-057-0403-0022) և 6/14 հասցեում գտնվող 0.46հա (ծածկագիր՝ 07-057-0403-0019) հողամասերը, որպես մեկ ամբողջություն 1.20454հա է:

Տարածքը կառուցապատված չէ և ունի որոշակի թեքություն:
Աշխատանքային նախագծի համաձայն, կառուցվող հանգստյան գոտին բաղկացած է լինելու երկու հիմնական շենքերից՝ գրասենյակային մասնաշենքից՝ (որտեղ կան նաև հյուրասենյակներ) և կառասրահից:

Նկարագրական մաս Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը թեք լանջի վրա է:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՕՑԵՆԿԻ ՎՕЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ЭКСПЕРТИЗЫ "ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT EXPERTISE CENTER" ՍՊԸ 02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ծառահատում չի իրականացվելու: Մինչ շինարարական աշխատանքների իրականացումը, անտառպարկի մասնագետները կնույնականացնեն Բույսերի Կարմիր Գրքում ընդգրկված բուսատեսակները և կտեղափոխեն նախատեսվող գործունեության վայրի անտառպարկի այլ տարածք:

Գրասենյակային մասնաշենքը երկհարկանի, 288մ² կառուցապատման մակերես ունեցող երկաթբետոնե շինություն է՝ օգտագործվող տանիքով: Շինությունը երեսպատվելու է տրավերտինե սալերով և ունենալու է ֆասադային ապակեպատում: Գրասենյակային շենքը ունենալու է գրասենյակային սենյակներ, հյուրասենյակներ և հանդիպման սենյակ:

Կառասրահը 1728մ² կառուցապատման մակերես ունեցող կառույց է, որը բաղկացած է լինելու
մետաղական սյուներից և ֆերմաներով կոնստրուկցիայից: Կառասրահի մի հատվածը բաղկացած է լինելու երկու հարկից, որտեղ տեղակայված են լինելու օժանդակ սենյակները՝ արհեստանոցներ, սանհանգույցներ, հանդերձասրահներ և այլն: Հիմնական տարածքը նախատեսված է ուղղաթիռների կայանման և սպասարկման համար:

Գրասենյակային շենքի և կառասրահի միջև ընկած տարածքը նախատեսված է ուղղաթիռների բացօթյա կայանման համար:

Ջրցանը իրականացվելու է հողային աշխատանքների ընթացքում, որոնց տևողությունը 5 ամիս է:

Հաշվի առնելով, որ օրական ջրցանի ենթարկվող մակերեսը կկազմի մոտ 100մ², իսկ 1մ² ջրցանի նորման 0.003մ³ է: Ջրցանի համար անհրաժեշտ ջրի քանակը կկազմի 45մ³: Կենցաղային կոյուղու ջրերն ինքնահոս հեռացվելու են դեպի բակային ցանց, որը միացված է տարածքում նախատեսված արտաքնոցի սեպտիկ հորերին: Արտաքնոցի սեպտիկ հորերի սպասարկումը՝ կեղտաջրերի պարբերաբար հեռացումը, իրականցվելու է ջրմուղ կոյուղու համապատասխան ծառայության կողմից:

Ավտոկայանատեղին նախատեսված է 20 ավտոմեքենայի համար՝ 300մ²:

Հանվող բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 30մ³, ինչը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար: Հողային հանույթը գնահատվում է 200մ³, որից 60մ³-ը նախատեսվում է հետլիցքի համար: Ավելացած հողային զանգվածը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 22 ամսում: Ընկերությունն ընդհանուր առմամբ ունենալու է 25 աշխատող, որոնց սանիտարակենցաղային և այլ կարիքների համար ջրապահանջը կազմում է՝

- տեխնիկական սպասարկման անձնակազմի (կառասրահ) 10 հոգու համար սանիտարակենցաղային և այլ կարիքների համար ջրապահանջը կազմում է 0.32մ³/օր,
- գրասենյակային աշխատողների (գրասենյակային շենք) 15 հոգու համար սանիտարակենցաղային և այլ կարիքների համար ջրապահանջն ընդհանուր առմամբ կազմում է 0.84մ³/օր, որից 0.24մ³/օր գրասենյակային աշխատողների

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՕԿՐՈՒԺԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

օրական ջրածախսն է, իսկ 0.6մ³/օր ջրածախսը հյուրատան համար օգտագործվող ջրի միջին ծախսն է:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի ու փոխադրամիջոցների ցանկը ներառում է՝

- աշտարակային կռունկ՝ КБ - 403՝ 1 հատ,
- ինքնաթափ 20տ՝ 1 հատ,
- թռթուռավոր էքսկավատոր՝ 1 հատ,
- տրակտոր՝ 1 հատ:

Շինարարկան աշխատանքների իրականացման ընթացքում ջրամատակարարումը կիրականացվի ցիստեռներով:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում.

Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից :

Հանգստի գոտու էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն «ՀԵՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի: Գործունեության շահագործման փուլում ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, որը միացված կլինի համայնքային ջրամատակարարման ցանցին: Հանգստի գոտու ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի: Հանգստի գոտու գազամատակարարումը իրականացնելու համար կառուցապատողը կդիմի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը՝ համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝

- շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբը (ծածկագիր 91200601 01 00 4) - մինչև 1 տոննա,
- չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի), (ծածկագիր 35131100 01 00 4) - մինչև 0.1 տ,
- օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր 3531030501 01 3) - մինչև 0.03 տ,
- չտեսակավորված այլումին պարունակող թափոններ (այդ թվում՝ այլումինի փոշի), (ծածկագիր 35310111 01 00 4) - մինչև 0.02 տ,
- կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ

(բացառությամբ խոշոր եզրաչափերի), (ծածկագիր 91200400 01 00 4) - 0.2 տ:

Հանգստյան գոտու շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու է տարածքից՝ Ջրվեժ համայնքի աղբահանող կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքների նպատակով՝ շինհրապարակում կնախատեսվեն 2 բիոզուգարաններ կամ սեպտիկ հոր:

Շինարարության ընթացքում բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում՝ շինարարական հրապարակից դուրս տեղակայված

վայրում: Շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի բարեկարգման նպատակով:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից դուրս (ապրիլ-մայիս): Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո ամբողջ տարածքը կանաչապատվելու է սիզամարգերով: Բարեկարգման/կանաչապատման աշխատանքների իրականացման նպատակով այլ վայրից բուսահող չի բերվելու՝ օգտագործվելու է տարածքից հանված բուսահողը: Կանաչապատման համար օգտագործվելու են գլորված սիզամարգեր,որոնք բերվելու են գլանափաթեթներով՝ պատրաստի հողային շերտով:

Նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման և արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում:

Նախատեսվում է՝

- փոշի առաջացման աշխատանքների ընթացքում պարտադիր իրականացնել շին. հրապարակի և մոտեցնող ճանապարհների ջրցան,
- համապատասխան բարձրության պաշտպանիչ ցանցի անցկացում,
- պարբերաբար իրականացնել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերի տեղադրումն իրականացել բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է այդ տարածքներում ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակը,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար անհրաժեշտ է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,

- աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել բոլոր տարածքները և առաջացած թափոնները և տեղափոխել ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- տարածքը մաքրել շինաղբից և բարեկարգել:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1050 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս

Համաձայն նախնական գնահատման հայտի, հանգստի գոտու համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ, ինչը պայմանավորված է շինարարական աշխատանքներով:

Օրենսդրությամբ սահմանված սահմանված կարգով առցանց իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության նախարարությունը, արտակարգ իրավիճակների նախարարությունը, պաշտպանության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն ու Կոտայքի մարզպետարանը: Հայտի լրամշակման ընթացքում հաշվի են առնվել նաև ստացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

-Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

-Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:

-Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում և շահագործումից հետո պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը, նախատեսել հակահրդեհային վահանակ և կրակմարիչներ:
-Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
-Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված:
-Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:
-Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:
-Պահպանել բնապահպանական օրենսդրությամբ նորմերի կատարումը և անտառի սանիտարա-պաշտպանիչ գոտին:
- Թռիչքները պետք է իրականացնել դեպի ձորը ընկած հատվածով, այլ՝ ոչ անտառային տարածքով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի վարչական տարածքում» Երևան-Գառնի մայրուղու թիվ 6/12 և 6/14 հողամասերում ուղղաթիռային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ.Գևորգյան

Փորձագետ՝ Հ. Մեսրոպյան